## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 79-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻՑ ԳՈՅԱՑԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 230-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության կողմից Խաչիկ բնակավայրին հատկացված հողի հարկի գումարները ժամանակին «Վեկտոր պլյուս» համակարգ չմուտքագրերու հետևանքով քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի հողի հարկերի նկատմամբ առ 31.12.2020թվականը հաշվարկվել է տույժեր, որոնք ենթակա չեն վճարման, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրում հողամասերի սեփականատերերին հողի հարկից գոյացած տույժերի գծով սահմանել արտոնություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի՝ կազմված 4 էջից՝ ընդհանուր 110 շահառու:

2. Սահմանված արտոնության ընդհանուր գումարը 524 466 ՀՀ դրամ է, որը կազմում է հաստատված ծավալի 1.89%-ը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍՄԲԱՏՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ